ԿԱՐԾԻՔ

Հռիփսիմե Մհերի Խաչատրյանի՝ «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ, ԺԲ.00.05 (Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ինչպես գրեթե բոլոր պետություններում, մեր երկրում ևս երեխաները գտնվում են պետության հատուկ հոգածության և պաշտպանության ներքո: Անչափահասների նկատմամբ հատուկ ուշադրությունը պայմանավորված է նրանց բնութագրիչ առանձնահատկություններով՝ անպաշտպանվածությամբ, անօգնականությամբ, կենսափորձի պակասով, բարձր հուզականությամբ, խոցելիությամբ: Ուստի, անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման քաղաքականությունը պետք է կառուցել՝ նախ և առաջ հաշվի առնելով անչափահասների վերոնշյալ առանձնահատկությունները:

Անվիճելի է, որ անչափահասների խմբային հանցավոր գործունեությունը բարձր հանրային վտանգավորություն է ներկայացնում, քանի որ հանցանքը խմբի կողմից կատարելը հեշտացնում է հանցավոր արդյունքին հասնելը, և խումբն իր ներդրումն է ունենում յուրաքանչյուր մասնակցի անհատական կարողություններն ամրապնդելու մեջ:

Հարկ է նկատել, որ հայրենական կրիմինալոգիայում անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրներին նվիրված տեսական բազմակողմանի և համընդգրկուն աշխատանքները գրեթե բացակայում են, իսկ կատարված փոքրաթիվ հետազոտություններն ի զորու չեն համալիր կերպով ներկայացնելու նշված հիմնահարցին առնչվող բազմաթիվ խնդիրներն ու գործնական բարդությունները:

Վերոգրյալը հավաստում է ընտրված թեմայի արդիականությունը և գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է նաև նրանում,

որ պաշտպանության ներկայացվող դրույթներում հեղինակը ներկայացնում է մի շարք առաջարկներ, որոնք կարող են էապես նպաստել անչափահասների խմբային հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության առավել արժեքավոր տեսական ու գործնական նշանակություն ունեցող դրույթները, մեր կարծիքով, հանգում են հետևյալին:

Հեղինակը, քննարկման ենթարկելով արտասահմանյան տարբեր երկրներում հանցագործության համար քրեական պատասխանատվության նվազագույն տարիք սահմանելու առանձնահատկությունները, ընդգծել է, որ ՀՀ-ում քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի կողմից պատժի սպառնալիքով արգելված արարքի կատարման դեպքում ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման վարչության կողմից պրոֆիլակտիկ հաշվառման են վերցվում անչափահասներին՝ 11 տարեկանից սկսած և նրանց նկատմամբ իրականացվում են կանխարգելիչ աշխատանքներ: Ստացվում է՝ 11-14 տարեկան անչափահասը, չհանդիսանալով հանցագործության սուբյեկտ, դառնում է, սակայն, պրոֆիլակտիկ ներգործության օբյեկտ: Կարծում ենք, որ հեղինակն իրավաչափորեն գտել է, որ առավել նպատակահարմար է պրոֆիլակտիկ ներգործության օբյեկտ դիտարկել անչափահասներին՝ 10 տարեկանից սկսած, քանի որ 10-12 տարիքային փուլն անցումային է՝ մանկահասակությունից դեպի դեռահասություն, և այդ տարիքն ունի ֆիզիոլոգիական, հոգեբանական, մանկավարժական առանձնահատկություններ: Ուստի, հաշվի առնելով և կարևորելով այս տարիքի առանձնահատկությունները, հեղինակն ընդգծել է, որ կրիմինալոգիական տեսանկյունից անչափահասների, այդ թվում՝ նրանց խմբային հանցավորության հասկացության տակ պետք է հասկանալ քրեական օրենքով նախատեսված հանրորեն վտանգավոր այն արարքների ամբողջությունը, որոնք կատարվում են 10-18 տարեկան անձանց կողմից:

Բացի այդ, անհրաժեշտ է նկատել, որ հեղինակը վերլուծության է ենթարկել ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված՝ Հայաստանում 2004-2018թթ. ընթացքում անչափահասների հանցավորության վերաբերյալ վիճակագրական տվյալները: Դրանց վերլուծության արդյունքում վերջինս արձանագրել է, որ ՀՀ-ում բացարձակ թվերով դրսևորում է անչափահասների հանցավորության կայուն նվազման միտում՝

վերոնշյալը պայմանավորելով անչափահասների հանցավորության լատենտայնության բարձր մակարդակով: Վիճակագրական տվյալների ուսումնասիրության արդյունքում հեղինակը, անդրադառնալով անչափահասների խմբային հանցավորության կառուցվածքի առանձնահատկություններին, արձանագրել է, որ անչափահասների խմբերի կազմում առավել հաճախ կատարվում են շահադիտական և բռնի-շահադիտական բնույթի հանցագործություններ: Ինչ վերաբերում է անչափահասների խմբային հանցավորության շարժընթացին, ապա վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքում հեղինակը փաստել է, որ հանցավորության ամենաբարձր ցուցանիշը Երևան քաղաքում է:

Կարծում ենք, մեծ կարևորություն է ներկայացնում հեղինակի կողմից ատենախոսության շրջանակներում առաջ քաշված այն մոտեցումը, որ անչափահասների հանցավոր խմբերի նկատմամբ պրոֆիլակտիկ ներգործության արդյունավետության տեսանկյունից ոչ թե անհատապես անչափահասը, այլ հանցավոր խումբը պետք է վերցվի պրոֆիլակտիկ հաշվառման, քանի որ անչափահասը հանցավոր վարքագիծ է դրսևորում և վտանգավոր է հենց խմբի կազմում: Հետևաբար, կանխարգելիչ ներգործությունը պետք է ուղղված լինի ոչ միայն խմբի անչափահաս անդամներին առանձին-առանձին, այլ նաև խմբին՝ ամբողջությամբ վերցրած:

Մեր համոզմամբ հեղինակի վերլուծությունը՝ ուղղված անչափահասների խմբային հանցավորության ընդհանուր և հատուկ կանխարգելման հիմնախնդրին և դրա կապակցությամբ վերջինիս կողմից կատարված առաջարկությունները, կարող են տեսական և գործնական արժեքավոր նշանակություն ունենալ:

Պետք է նշել, որ ատենախոսության հեղինակին հաջողվել է գիտական պատշաճ մակարդակով համալիր հետազոտություն իրականացնել: Դրան նպաստել է հատկապես այն հանգամանքը, որ նա լայնորեն օգտվել է դատական պրակտիկայի նյութերից, վիճակագրական տվյալներից, վերլուծության է ենթարկել համապատասխան միջազգային փաստաթղթերը:

Այսպիսով, կարելի է հավաստել, որ սույն թեկնածուական ատենախոսությունը արդիական աշխատանք է: Դրանում բազմակողմանի հետազոտության են ենթարկվել անչափահասների խմբային հանցավորության հիմնախնդիրները, մասնավորապես՝

անչափահասների հանցավորությանը նպաստող գործոնները, անչափահասների խմբային հանցավորության ընդհանուր և հատուկ կանխարգելման հիմնահարցերը, որոնց վերաբերյալ կատարվել են տեսական և գործնական կարևորություն ներկայացնող մի շարք առաջարկություններ:

Այնուամենայնիվ կցանկանայինք որոշ նկատառումներ արտահայտել աշխատանքի կապակցությամբ, որոնք հանգում են հետևյալին:

1. Ատենախոսության՝ պաշտպանության ներկայացվող երկրորդ և երրորդ կետերում արտացոլվել են հետևյալ դրույթները՝ *խմբի հասարակական վտանգավորությունն առավել բարձր է, երբ նրա կազմում գործում են նախկինում դատապարտված ու հանցավոր փորձ ունեցող մասնակիցներ և միջանձնային շփման գերիշխող դերը կանխորոշում է համատեղ հանցավոր գործունեությունը, իսկ հանցանքի կատարումն այն միջոցն է, որով անչափահասը հասնում է խմբում ներգրավված և պահանջված լինելու նպատակին՝ ձեռք բերելով հանցավոր փորձ և անհատական հանցավոր «կարիերա» սկսելու ինքնավստահություն:* Թեև ընդհանուր առմամբ համամիտ ենք արտահայտված վերոնշյալ մտքերի հետ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ դրանք փոքր-ինչ խնդրահարույց են գիտական նորույթի տեսանկյունից:

2. Հեղինակը, ատենախոսության 143-144-րդ էջերում անդրադառնալով անչափահասների խմբային հանցավորության հատուկ կանխարգելման հարցում քրեակատարողական հիմնարկի և պրոբացիայի ծառայության դերակատարությանը, նշել է, որ *«Արովյան» քրեակատարողական հիմնարկում ևս անհրաժեշտ է խմբային պրոֆիլակտիկայի ներդրում և մարտավարության մշակում, և որ պրոբացիայի՝ խմբի կազմում հանցանք կատարած անչափահաս շահառուի նկատմամբ, բացի անհատականից, պետք է ներդնել և իրականացնել խմբային պրոֆիլակտիկա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խմբերի մեծ մասը ձևավորվում են ըստ բնակավայրի:* Կարծում ենք, որ աշխատանքն առավելապես կշահեր, եթե հեղինակը, վեր հանելով տվյալ ոլորտներում առկա խնդիրները, ներկայացներ սեփական առաջարկությունները և եզրահանգումները անչափահասների խմբային պրոֆիլակտիկայի հիմնական ուղղությունների, հնարավոր խնդիրների և դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ: Վերոնշյալը կունենար ոչ միայն տեսական,

այլն գործնական կարևոր նշանակություն՝ հատկապես հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկի և պրոբացիոն ծառայության ենթադրվող կարևոր դերակատարությունը և առաքելությունը հանցանք կատարած անձանց հատուկ կանխարգելման հարցում:

3. Հեղինակը նշել է, որ անչափահասները գերիշխող դեպքերում դատապարտվում են ազատազրկման, սակայն ըստ միջինացված ցուցանիշի՝ 71,6% դեպքերում, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը փաստացի չեն կրում, իսկ մնացած դեպքերում էլ վերջիններիս նկատմամբ կիրառվում է համաներում, ինչը, ըստ հեղինակի, պայմանավորված է այն հանգամանքով, որ ազատազրկումը պատժի համակարգում համարվում է ամենախիստ պատժատեսակը և բացասական ազդեցություն է ունենում անչափահասների նկատմամբ: Միևնույն ժամանակ, սակայն, հեղինակը որևէ վերլուծության չի ենթարկել դրանով պայմանավորված անչափահասների շրջանում հնարավոր անպատժելիության մթնոլորտի ձևավորման խնդիրը, և դրա բացասական ազդեցությունը վերջիններիս հանցավոր վարքագիծը կանխարգելելու հարցում, քննարկման առարկա չի դարձրել վերոնշյալ խնդրի հիմնական պատճառները և դրանց հաղթահարմանն ուղղված հնարավոր օրենսդրական լուծումները:

4. Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակի կողմից ուսումնասիրվեին նաև անչափահասների խմբային հանցավորության միտումներն արտասահմանյան երկրներում, ինչպես նաև իրականացվեր դրանց կանխարգելման հարցում մի շարք զարգացած իրավական համակարգ ունեցող երկրների միջազգային դրական փորձի վերլուծություն: Վերոնշյալը ոչ միայն թույլ կտար առավել ամբողջական և լիարժեք պատկերացում կազմել անչափահասների խմբային հանցավորության համաշխարհային միտումների վերաբերյալ, այլ նաև կատարել համապատասխան առաջարկություններ՝ անչափահասների հանցավորության կանխարգելման հարցում արդյունավետ մեխանիզմներ ներդնելու ուղղությամբ:

Պետք է նշել, սակայն, որ նշված նկատառումները ամենևին չեն նսեմացնում աշխատանքի արժանիքները, մասնակի բնույթ են կրում, պայմանավորված են աշխատանքն էլ ավելի լիարժեք և ամփոփ տեսնելու ցանկությամբ, իսկ որոշ դեպքերում մեր անձնական կարծիքն են ներկայացնում և չեն կարող էապես ազդել

աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի վրա: Ատենախոսական հետազոտության արդյունքների հավաստիությունը կասկած չի հարուցում: Ատենախոսությունը կատարված է պատշաճ գիտական մակարդակով, ունի հարուստ էմպիրիկ և աղբյուրագիտական հիմք:

Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Վերոգրյալի հիման վրա կարելի է հավաստել, որ «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը լիովին բավարարում է և համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ դրա հեղինակը՝ Հռիփսիմե Միհերի Խաչատրյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.05 (Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք) մասնագիտությամբ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի
ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Ժ.Ա. Ստեփանյան

Ժ. Ստեփանյանի ստորագրությունը
հաստատում եմ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի
տեղակալ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ. Մ. Խաչիկյան